# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՐՈԹԵԶԱՕՐԹՈՊԵԴԻԿ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ՝ 13.02.2018 ԹՎԱԿԱՆԻ N «ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/1-Պ-Ս» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «14» «02» 2018թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն, ի դեմս կազմակերպության նախագահ Հ. Հունանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, հիմք ընդունելով 13.02.2018թ. N «ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/1-Պ-Ս» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

### *1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ*

1.1 Պայմանագրի Հավելված 1-ում «Ծառայության մատուցման ժամկետը**» սյունակը լրացնել «Ըստ շահառուների դիմելիության» բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

### *2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ*

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին

### *3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ*

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածը կազմված են 3 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011016723
ՀՎՀՀ՝ 01506515

Աշխատակազմի ղեկավար ........................... Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Սատար» Հաշմանդամների ՀԿ
ՀՀ ք. Երևան, Նոր-Արեշ 35 փ. 2
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2051222041131001
ՀՎՀՀ՝ 02252332

Նախագահ ........................... Հ. Հունանյան
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված*
*« 13 » փետրվարի 2018 թ. կնքված*
*«ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/1-Պ-Ս» ծածկագրով պայմանագրի*
*Համաձայնագիր 1-ի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 51411130 | Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, պլաստիկից (AFO) | | | 1315902 | 1939224 | 2493288 | 3116610 | 3670674 | 4224738 | 4848060 | 5540640 | 6233220 | 6925800 | 6925800 |
| 2 | 51411130 | Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, պլաստիկից | | | 1222536 | 1801632 | 2316384 | 2895480 | 3410232 | 3924984 | 4504080 | 5147520 | 5790960 | 6434400 | 6434400 |
| 3 | 51411130 | Պրոթեզի կոշիկ | | | 5130000 | 7560000 | 9720000 | 12150000 | 14310000 | 16470000 | 18900000 | 21600000 | 24300000 | 27000000 | 27000000 |
| 4 | 51411130 | Օրթոպեդիկ կոշիկ | | | 7970880 | 11746560 | 15102720 | 18878400 | 22234560 | 25590720 | 29366400 | 33561600 | 37756800 | 41952000 | 41952000 |
| 5 | 51411130 | Ներդիր հարթաթաթության համար | | | 1395170 | 2056040 | 2643480 | 3304350 | 3891790 | 4479230 | 5140100 | 5874400 | 6608700 | 7343000 | 7343000 |
| 8 | 51411130 | Կրծքագեղձի էկզոպրոթեզ | | | 3588340 | 5288080 | 6798960 | 8498700 | 10009580 | 11520460 | 13220200 | 15108800 | 16997400 | 18886000 | 18886000 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 20622828 | 30391536 | 39074832 | 48843540 | 57526836 | 66210132 | 75978840 | 86832960 | 97687080 | **108541200** | 108541200 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

/ստորագրություն/
Կ.Տ

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՐՈԹԵԶԱՕՐԹՈՊԵԴԻԿ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/1-Պ-Ս»

ք.Երևան «13» փետրվարի 2018թ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ն. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մատար» Հաշմանդամների ՀԿ-ն, ի դեմս նախագահ Հ. Հունանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն,

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագրի կատարումից և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էապես խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված տաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին ետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 108541200 (Մեկ հարյուր ութ միլիոն հինգ հարյուր քառասունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը վերջնական է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դառնալ այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ ուսուցողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքների վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 48 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորը յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը նախատեսված ֆինանսական միջոցների չափով փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ գումարով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Սատար» Հաշմանդամների ՀԿ |
| ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3 | ՀՀ ք. Երևան, Նոր-Արեշ 35 փ. 2 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011016723 | Հ/Հ 2051222041131001 |
| ՀՎՀՀ՝ 01506515 | ՀՎՀՀ՝ 02252332 |
| Աշխատակազմի ղեկավար .......................... Ա. Գրիգորյան | Նախագահ .......................... Հ. Հունանյան |
| ստորագրություն | ստորագրություն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
«13» փետրվարի 2018թ. կնքված
N «ԱՍՀՆ ԲՄԾՁԲ 18-1 Պ Ս» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Ծառայության մատուցման հասցեն | Ծառայության մատուցման ժամկետը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 51411130 | Սրունք թաթային օրթեզ առանց հոդի, պլաստիկից (AFO) | Ներկայացված է ստորև | հատ | 32980 | 6925800 | 210 | Ըստ Պատվիրատուի կողմից ծառայությունների մատուցման հասցեի | |
| 2 | 51411130 | Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, պլաստիկից | Ներկայացված է ստորև | հատ | 229800 | 6434400 | 28 | Ըստ Պատվիրատուի կողմից ծառայությունների մատուցման հասցեի | |
| 3 | 51411130 | Պրոթեզի կոշիկ | Ներկայացված է ստորև | զույգ | 13500 | 27000000 | 2000 | Ըստ Պատվիրատուի կողմից ծառայությունների մատուցման հասցեի | |
| 4 | 51411130 | Օրթոպեդիկ կոշիկ | Ներկայացված է ստորև | զույգ | 28500 | 41952000 | 1472 | Ըստ Պատվիրատուի կողմից ծառայությունների մատուցման հասցեի | |
| 5 | 51411130 | Ներդիր հարթաթաթության համար | Ներկայացված է ստորև | զույգ | 10490 | 7343000 | 700 | Ըստ Պատվիրատուի կողմից ծառայությունների մատուցման հասցեի | |
| 6 | 51411130 | Կրծքագեղձի էկզոպրոթեզ | Ներկայացված է ստորև | հատ | 26980 | 18886000 | 700 | Ըստ Պատվիրատուի կողմից ծառայությունների մատուցման հասցեի | |
| | **Ընդամենը** | | | | | **108541200** | | | |

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը.*

*** եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա նշանակված ժամկետների հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**** Ծառայությունները մատուցվում են ըստ շահառուների դիմելիության*

Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և տրամադրման ծառայությունների շրջանակներում ***օրթեզների*** պատրաստման ծառայությունների

Ստորև բերված տեխնիկական բնութագրերը կիրառվում են ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում՝ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և տրամադրման ծառայությունների

շրջանակներում օրթեզների պատրաստման ծառայությունների 1-26 չափաբաժինների նկատմամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող օրթեզների պատրասման ծառայությունները մատուցվում են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10 ի N 1035-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

Ստորև բերված չափաբաժինների պատրաստման, նյութերը և տեխնոլոգիաները պետք է համապատասխանեն միջազգային կամ միջպետական կամ եվրոպական ստանդարտներին և ունենան այդ ստանդարտների համպատասխանության հավաստագիր կամ հայտարարագիր:

Որոշման համաձայն հաշմանդամություն ունեցող անձանց /այսուհետ՝ շահառու/ տրամադրվում է՝

# ՕՐԹԵԶՆԵՐ

*1-2-րդ չափաբաժիններին վերաբերող ընդհանուր պահանջներ, առանձնահատկություններ և այլ պայմաններ*

| | |
|---|---|
| Պատրաստման նյութերը | Կաշվե-մետաղական շինաներ, պլաստիկ արհեստական նյութեր, տեքստիլ և համակցված (բարձր ջերմաստիճանային և ցածր ջերմաստիճանային թերմոպլաստներ՝ պոլիպրոպիլեն և պոլիէթիլեն, նյութեր լամինացիայի համար, ածխապլաստիկ նյութեր և այլն): Հոդերը պատրաստվում են մետաղից (ալյումին, տիտան, երկաթ), պլաստիկից, կոմբինացված (պլաստիկ-մետաղ),մոդուլային, կարբոնային և այլն: |
| Պարագայի պատրաստման և/կամ տրամադրման պայմանները | 1. Պատրաստման և տրամադրման առավելագույն ժամկետը 15 օր՝ կախված բարդության աստիճանից, որի ընթացքում կատարվում են անհրաժեշտ քանակի չափափորձարկումներ՝ մինչ պարագայի վերջնական հարմարեցումը շահառուին: Պատրաստման ժամկետը կարող է երկարաձգվել այն դեպքում, եթե շահառուն սահմանված ժամկետում չի ներկայանում չափափորձարկման:<br>2. Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատապես, կատարելով համապատասխան չափագրումներ՝հաշվի առնելով ախտաբանական վիճակի բնույթը, ուղեկցող հիվանդությունների և վերքերի առկայությունը, բժշկի կողմից նշանակված օրթեզի կրման նպատակը, դեֆորմացիայի շտկման աստիճանը և չափը:<br>3. Շահառուին սովորեցվում է պարագայից օգտվելու ձևը և տրամադրվում է գրավոր տեղեկատվություն-հուշաթերթիկ դրա հիմնական տեխնիկական բնութագրերի, երաշխիքային սպասարկման, պահպանման ու օգտագործման կանոնների, հերթական տրամադրման ժամկետի վերաբերյալ: |

| | |
|---|---|
| | 4.Շահառուին է հանձնվում վերջնական փորձարկումից և նրա գրավոր համաձայնությունից հետո: |
| Չափաբաժիններին ներկայացվող պահանջները | Պետք է բավարարի շահառուի պահանջներին՝<br>➢ բժշկական ցուցումներով<br>➢ թեթևությամբ<br>➢ անթրոպոմետրիկ տվյալներով<br>➢ տարիքային առանձնահատկություններով<br>➢ դիմացկունությամբ և ամրությամբ<br>➢ ֆունկցիոնալությամբ<br>➢ հարմարությամբ<br>➢ էսթետիկ տվյալներով |
| Վիճակը | Չօգտագործված, ամբողջությամբ նոր նյութերից և դետալներից պատրաստված |
| Երաշխիքային ժամկետ | **երաշխիքային սպասարկում է իրականացվում օգտագործման ամբողջ ընթացքում:**<br>Օգտագործման ամբողջ ժամանակահատվածում պահանջվող վերանորոգումները, որակի հետ կապված խնդիրների վերացումը (ընդհուպ նորով փոխարինումը) իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին:<br>Երաշխիքային սպասարկում կարող է չիրականացվել, եթե՝<br>1. խախտվել են պարագայի պահպանման ու օգտագործման կանոնները,<br>2. թերությունն առաջացել է բնականոն մաշվածության հետևանքով: Ընդ որում, բնականոն մաշվածություն համարվում են պարագայի օգտագործման հետևանքները, որոնք երաշխիքային ժամկետում առաջացրել են տեխնիկական վիճակի և արտաքին տեսքի վատթարացում,<br>3. պարագան օգտագործվել է ոչ անմիջական նշանակությամբ,<br>4. պարագայի վրա առկա են չլիազորված անձանց կողմից կատարված վերանորոգման հետքեր. |

5. թերությունն առաջացել է պարագայի կառուցվածքը կամ սխեման փոխելու հետևանքով.

6. թերությունն առաջացել դժբախտ պատահարների, միտումնավոր կամ անզգույշ կատարած քայլերի կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով.

7. պարագան սպառողին հանձնելուց հետո նրա վրա հայտնաբերվել են մեխանիկական վնասվածքներ՝ խոնավության, բարձր կամ ցածր ջերմաստիճանի, ժանգոտման, թթվային միջավայրի ազդեցության տակ առաջացած վնասվածքներ:

*Վերը նշված 1-7-րդ դեպքերի համար անձն իր միջոցների հաշվին է իրականացնում վերանորոգումը, մնացած բոլոր դեպքերի համար սույն չափաբաժինը հաղթող կազմակերպության միջոցների հաշվին:*

Երաշխիքային ժամկետի հետ կապված վիճահարույց դեպքերի վերաբերյալ քաղաքացու դիմումի հիման վրա եզրակացություն է ներկայացնում Բուժտեխնիկական հանձնաժողովը:

**Նախորդ տարիներին տրամադրված օրթեզների վերանորոգումը իրականացվում է հետևյալ սկզբունքով՝**

*սույն տեխնիկական բնութագրի 2-րդ չափաբաժնով հաղթած կազամակերպությունը պարտավոր է վերանորոգել նաև նախորդ տարիներին տրամադրված սրունքի հոդով օրթեզները:*

Նախորդ տարիներին տրամադրված ստորին վերջույթի հոդով օրթեզների վերանորոգումներ կարող է չիրականացվել միայն վերը նշված 7 դեպքերում:

Անվտանգությունը

Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը պետք է պատրաստվեն հիպոալերգիկ նյութերի: Օրթեզները պետք է բացառեն ճնշումը չթույլատրվող հատվածների վրա (ավշային հանգույցներ, կրծքագեղձեր, ոսկրային դուրս ցցված հատվածներ, մակերեսային անոթներ, նյարդեր), ելնելով անձի

ֆիզիոլոգիական առանձնահատկություններից անհրաժեշտության դեպքում ներսից պատվեն փափուկ պոլիմերային կամ տեքստիլ նյութերով, բավարարեն շահառուի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին՝ հաշվի առնելով նրա հիմնական և ուղեկցող հիվանդությունների բնույթը, չպետք է խորացնեն առկա ախտաբանական խնդիրները:

*1) Տեխնիկական բնութագրեր*

| Չափաբաժին | Անվանում | Ենթատեսակ | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|
| 1 | Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, պլաստիկից (AFO) | 1.1 Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, պլաստիկից | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև սրունքի միջին-վերին 3-րդը, լիովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, |
| | | 1.2 Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի՝ որոշակի շարժումով, պլաստիկից | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև սրունքի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս որոշակի շարժումներ սրունք-թաթային հոդում ճկունության շնորհիվ: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, որոշակի ֆունկցիոնալ |
| | | 1.3 Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի ՝ ծնկոսկրի (պատելլայի) կրումով, պլաստիկից | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև ծնկան հոդը և հենվում է ծնկոսկրին: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, բեռնաթափող |
| | | 1.4 Սրունքի կոսմետիկ օրթեզ, պլաստիկից | Տեղադրվում է սրունքի շրջանում, ամբողջովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, կոսմետիկ |
| | | 1.5 Ոտնաթաթի օրթեզ, պլաստիկից (SMO) | Տեղադրվում է ոտնաթաթի և ս/թ հոդի շրջանում՝ մինչև սրունքի ս/3 շրջանը, լիովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, բեռնաթափող |

| | | | |
|---|---|---|---|
| | | 1.6 Ոտնաթաթի օրթեզ, պլաստիկից (UCBL) | Տեղադրվում է ոտնաթաթի շրջանում՝ մինչև ս/թ հոդի շրջանը. լիովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, տեղադրվում է կոշիկի մեջ: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, բեռնաթափող |
| 2 | Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, պլաստիկից | 2.1 Ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան հոդով, պլաստիկից (KAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում, սրունք-թաթային հոդն անշարժ է: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ |
| | | 2.2 Ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան և սրունք-թաթային հոդերով, պլաստիկից (KAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան և սրունք-թաթային հոդերում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ |
| | | 2.3 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան հոդով, պլաստիկից (HKAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող |
| | | 2.4 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան և սրունք-թաթային հոդերով, պլաստիկից (HKAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան և սրունք-թաթային հոդերում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող |
| | | 2.5 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային հոդով, պլաստիկից | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային հոդում: Արհեստական հոդն ունի |

| | |
|---|---|
| (HKAFO) | անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ |
| 2.6 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային և ծնկան հոդերով, պլաստիկից (HKAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք ազդրային և ծնկան հոդերում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ |
| 2.7 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային ծնկան և սրունք-թաթային հոդերով, պլաստիկից (HKAFO) | Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային, ծնկան և սրունք-թաթային հոդերում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ |

**Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝**

